ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԳՊՀ գիտական խորհրդի 2025թ.
ապրիլի 25-ի թիվ 11 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«25» ապրիլի 2025թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգը սահմանում է Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան, ԳՊՀ) բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) ներքին փորձաքննության իրականացման նպատակները, խնդիրները, մեթոդները, սկզբունքները, արտաքին փորձագետի ընտրության չափանիշները, փորձաքննության անցկացման փուլերն ու կարգը:
2. Ընթացակարգը մշակվել է՝ հիմք ընդունելով ԳՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքները, կրթության որակի ապահովման ազգային և եվրոպական չափանիշներն ու չափորոշիչները, «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագիրը, «ԳՊՀ-ում ուսուցանվող մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, հաստատման, իրականացման ընթացքի մշտադիտարկման և բարելավման ընթացակարգը», ԳՊՀ այլ ներքին իրավական ակտերը:
3. Ընթացակարգը կարող է վերանայվել ու փոփոխվել ԳՊՀ գիտական խորհրդի կողմից:

II. ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. **ԳՊՀ-ում մասնագիտական կրթական ծրագրերի ներքին փորձաքննության իրականացման նպատակներն են.**
   1) **կրթության որակի ապահովում և բարելավում՝** բակալավրիատի առկա և հեռակա բաժիններում, մագիստրատուրայում իրականացվող ՄԿԾ-ների պարբերական գնահատման, վերանայման և արդիականացման միջոցով՝ ապահովելով դրանց համապատասխանությունը կրթության որակի ապահովման ազգային և եվրոպական չափանիշներին,
   2) **ուսանողների և շրջանավարտների մասնագիտական որակների գնահատում՝** ուսումնասիրելով և վերլուծելով սովորողների գիտելիքներն ու

կարողությունները, շրջանավարտների համապատասխանությունը գործատուների պահանջներին,

3) **վտանգների և անհամապատասխանությունների բացահայտում ու կանխում՝** ուսումնասիրելով և վերլուծելով ՄԿԾ-ների թույլ կողմերը, հնարավոր վտանգները և մշակելով դրանց հաղթահարման ու բարելավման ուղիներ:

5. **ԳՊՀ-ում մասնագիտական կրթական ծրագրերի ներքին փորձաքննության իրականացման խնդիրներն են.**

1) կրթական ծրագրերի բովանդակության համապատասխանության ապահովումը աշխատաշուկայի պահանջներին, Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին՝ գնահատելով, թե որքանով է ՄԿԾ-ն համահունչ կրթության որակի ապահովման ազգային և եվրոպական չափանիշներին և ուղենիշներին, աշխատաշուկայի պահանջներին,

2) դասախոսական կազմի որակի վերահսկումը՝ ուսումնասիրելով և վերլուծելով պրոֆեսորադասախոսական կազմի համապատասխանությունը ՄԿԾ-ի պահանջներին, բարելավելով նրանց կարիքների վերհանման և բավարարման, դասախոսների խրախուսման կառուցակարգերը,

3) դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատումը՝ ուսումնասիրելով և վերլուծելով դասավանդման մեթոդների արդյունավետությունը, ուսանողների ներգրավվածության մակարդակը և նրանց ակադեմիական առաջընթացի արդյունքները,

4) ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և գնահատման համակարգի արդյունավետության ապահովումը՝ ստուգելով, թե որքանով են ուսանողների գնահատման մեթոդները նպատակային, արդարացի և օբյեկտիվ, ինչպես են նպաստում ուսանողների կողմից անհրաժեշտ իրազեկությունների ձեռքբերմանը,

5) ՄԿԾ-ի հետազոտական և ստեղծագործական բաղադրիչների զարգացումը՝ վերլուծելով, թե ինչպես են ՄԿԾ-ները խթանում ուսանողների գիտահետազոտական, ստեղծագործական և նորարարական գործունեությունը,

6) կրթական միջավայրի բարելավումը՝ հետազոտելով ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, ուսումնական ռեսուրսները, գնահատելով դրանց համապատասխանությունը ՄԿԾ-ի պահանջներին, շահակիցների կարիքներին և հասանելիությունը ուսանողներին,

7) Կրթության որակի ապահովման կառուցակարգերի կատարելագործումը՝ ուսումնասիրելով և վերլուծելով ՄԿԾ-ների որակի շարունակական բարելավման աշխատանքները, դրանց համապատասխանությունը ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի առաջնահերթություններին, կրթության որակի սահմանված չափանիշներին, գնահատելով մշտադիտարկման և բարելավման գործընթացներում հիմնական շահակիցների՝ ուսանողների, դասախոսների, գործատուների, շրջանավարտների ներգրավվածությունը:

III. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

6. ԳՊՀ-ում ՄԿԾ-ի ներքին փորձաքննության իրականացման մեթոդները այն միջոցները, ձևերն ու եղանակներն են, որոնք ապահովում են մասնագիտական կրթական ծրագրերի և դրանց իրականացման որակի արդյունավետ գնահատումը, վտանգների ու անհամապատասխանությունների բացահայտումը և բարելավման միջոցառումների մշակումը:

6.1. ՄԿԾ-ի ներքին փորձաքննության հիմնական սկզբունքներն են.

ա) օբյեկտիվությունը՝ փորձաքննությունը պետք է իրականացվի անկախության, ակադեմիական ազնվության և անաչառության սկզբունքներով,

բ) հավաստիությունը՝ փորձաքննությունը պետք է հիմնվի միայն չափելի և արժանահավատ տվյալների ու վերլուծությունների վրա,

գ) թափանցիկությունը՝ փորձաքննության ընթացքը, եզրակացություններն ու առաջարկությունները պետք է հասանելի լինեն շահակիցների համար,

դ) պարբերական բնույթը՝ փորձաքննությունը պետք է իրականացվի պարբերաբար՝ ապահովելով մասնագիտական կրթական ծրագրերի շարունակական բարելավումը:

6.2. Մեթոդների ընտրությունը.

ԳՊՀ-ում ՄԿԾ-ների ներքին փորձաքննության իրականացման ընթացքում արժանահավատ քանակական տվյալների և որակական բնութագրերի հավաքագրման համար կարող են կիրառվել հետևյալ մեթոդները.

ա) փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն՝

ուսումնասիրվում և վերլուծվում են կրթական ծրագրերին վերաբերող փաստաթղթերը՝ նպատակ ունենալով գնահատել դրանց բովանդակության համապատասխանությունը սահմանված չափանիշներին, կանոնակարգերին և ակադեմիական պահանջներին: Մեթոդը հիմնականում կիրառվում է փորձաքննության առաջին փուլում՝ պարզելու ՄԿԾ-ի և դրա իրականացման գործընթացների ու ռեսուրսների համապատասխանությունը որակի ապահովման պահանջներին: Փաստաթղթերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, անհրաժեշտ տվյալների հավաքագրումը կատարվում է առանց դասավանդման և ուսումնառության գործընթացներին միջամտելու,

բ) հարցումների իրականացում և կարծիքների հավաքագրում՝

հարցումներն անցկացվում են ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների շրջանում՝ նրանց կարիքների վերհանման և կարծիքների բացահայտման, հարցումների արդյունքների վերլուծության և համապատասխան եզրակացությունների ու առաջարկությունների ներկայացման, խորհրդատվության իրականացման նպատակով,

գ) հարցազրույցներ, հանդիպումներ շահակիցների, նրանց խմբերի հետ՝

ԳՊՀ-ի ներքին և արտաքին շահակիցների՝ ուսանողների, դասախոսների, վարչական և ուսումնաօժանդակ կազմի անդամների, գործատուների, շրջանավարտների հետ անհատական և խմբային հանդիպումներ,

դ) ուսումնական գործընթացի դիտարկում՝

դասալսումների միջոցով՝ ուսուցման և ուսումնառության որակի ստուգման, դասավանդման մեթոդների, արդի կրթական տեխնոլոգիաների կիրառման, ուսանողների ակտիվության և ներգրավվածության, դասախոս-ուսանող փոխգործակցության ուսումնասիրության և արդյունավետության գնահատման նպատակներով,

դ) փորձագիտական հաշվետվությունների կազմում՝

ներքին փորձաքննության ընթացքում հայտնաբերված խնդիրների արձանագրում, տվյալների վերլուծություն և եզրակացությունների ձևակերպում, փորձաքննության արդյունքների հիման վրա բարելավման առաջարկությունների ներկայացում, խորհրդատվություն:

IV. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7. ԳՊՀ-ում ՄԿԾ-ների ներքին փորձաքննությունն իրականացվում է կրթության որակի կառավարման ՊԻԳԲ՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում, շրջափուլին համապատասխան:

7.1. Պլանավորում՝

ա) ՄԿԾ-ի փորձաքննության նպատակների, չափանիշների, վարկածի սահմանում,

բ) ՄԿԾ-ի փորձաքննությունն իրականացնող խմբի ձևավորում.

խմբում պետք է ներգրավված լինեն ԳՊՀ որակի ապահովման, ակադեմիական քաղաքականության բաժինների աշխատակիցները, ֆակուլտետի դեկանը, փոխդեկանը, ՄԿԾ-ի ղեկավարը, առնվազն մեկ դասախոս ու ուսանող, այլ շահակիցներ,

գ) ՄԿԾ-ի ներքին փորձաքննության իրականացման և արտաքին փորձագետի ներգրավման ժամանակացույցի հաստատում, փորձաքննության իրականացման մասին պայմանագրի կազմում,

դ) ՄԿԾ-ի ներքին փորձաքննության իրականացման զեկույցի և արտաքին փորձագիտական կարծիքի ձևաչափի մշակում և հաստատում,

ե) ՄԿԾ-ի ներքին փորձաքննության իրականացման զեկույցի արդյունքների գնահատման համար արտաքին փորձագետի ընտրություն, փորձաքննության իրականացման մասին պայմանագրի կնքում:

7.2. Իրականացում՝

ա) տվյալների հավաքագրում և նախապատրաստում՝ ՄԿԾ-ի ուսումնասիրության համար անհրաժեշտ քանակական տվյալների և որակական արդյունքների,

համապատասխան փաստաթղթերի հավաքագրում, ուսումնասիրում, վերլուծություն:

7.3. Գնահատում՝

ա) ՄԿԾ-ի համապատասխանության գնահատում ԳՊՀ տեսլականին, առաքելությանը, ռազմավարական զարգացման ծրագրին, ՄԿԾ-ի նպատակներին, ուսանողների կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին,

բ) հավաքագրված տվյալների ուսումնասիրություն և ներքին փորձաքննության զեկույցի կազմում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտական կրթական ծրագրի համատարմագրման ինքնավերլուծության չափանիշները և չափորոշիչները, այլ վերաբերելի ակտեր,

գ) արտաքին փորձագետի կողմից ՄԿԾ-ի ներքին փորձաքննության իրականացման զեկույցի և կից փաստաթղթերի ուսումնասիրում և փորձագիտական զեկույցի կազմում, խորհրդատվության և առաջարկությունների ներկայացում:

7.4. Բարելավում՝

ա) հավաքագրված տվյալների ուսումնասիրման և գնահատման արդյունքների հիման վրա բարելավման գործողությունների պլանի մշակում՝ ուղղված ՄԿԾ-ների և դրանց իրականացման որակի բարձրացմանը,

բ) գործողությունների պլանի կատարման ընթացքի վերահսկում, մշտադիտարկում:

IV. ԱՐՏԱՔԻՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

8. ԳՊՀ-ն ՄԿԾ-ների ներքին փորձաքննության արդյունքներն արտաքին փորձաքննության ենթարկելու համար ներգրավում է բարձր մասնագիտական կարողություններ ունեցող փորձագետների, որոնք

8.1. իրականացնում են ինքնավերլուծության զեկույցի և հավելվածների ուսումնասիրություններ,

8.2. կարող են կատարել այցեր Համալսարան, հանդիպել ուսանողների, դասախոսների, վարչական կազմի, շրջանավարտների, գործատուների հետ, ծանոթանալ կրթական միջավայրին, դիտարկել ուսումնական ռեսուրսները,

8.3. փորձաքննության իրականացման ընթացքում օգտագործում են միայն օրինական մեթոդներ ու միջոցներ և ղեկավարվել ՀՀ գործող օրենսդրությամբ,

8.4. պահպանում են ԳՊՀ-ի սահմանած նորմերն ու ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթները, չեն հրապարակում ուսումնասիրության ընթացքում ստացված այն տեղեկությունները և տվյալները, որոնք հանդիսանում են ԳՊՀ-ի մտավոր սեփականությունը կամ առևտրային գաղտնիք,

8.5. փորձաքննության արդյունքների հիման վրա ներկայացնում են փորձագիտական զեկույց:

9. ԳՊՀ-ում արտաքին փորձագետների ընտրության չափանիշներն են՝

9.1. մասնագիտական, ակադեմիական ոլորտում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձի առկայություն.

Փորձագետները պետք է ունենան համապատասխան մասնագիտական որակավորում, հմտություններ և փորձ բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացներում, տիրապետեն կրթության որակի ապահովման ազգային և եվրոպական չափանիշներին,

9.2. անկախություն, անկողմնակալություն և ակադեմիական ազնվություն.

ա) փորձագետը պետք է լինի անկախ և ԳՊՀ-ի հետ չգտնվի աշխատանքային հարաբերությունների մեջ,

բ) փորձագետը պետք է դրսևորի ակադեմիական ազնվություն, ապահովի օբյեկտիվ փորձաքննություն և արդարացի գնահատում՝ բացառելով շահերի բախումը,

գ) փորձագետը պետք է կատարի ԳՊՀ-ի հետ կնքած պայմանագրի պայմանները, չհրապարակի ՄԿԾ-ի ներքին փորձաքննության զեկույցը, հավելվածները, տվյալները, չտարածի փորձաքննության ընթացքին վերաբերող տեղեկատվություն,

9.3. հաղորդակցման և վերլուծական կարողություններ.

փորձագետը պետք է

ա) ունենա գրավոր և բանավոր հաղորդակցման, ինչպես նաև մեծ ծավալի տեղեկատվության հետ աշխատելու և վերլուծելու ունակություններ,

բ) կարողանան վարել հարցազրույցներ, շահակից խմբերի հետ նպատակային քննարկումներ,

9.4. փորձագետների ընտրության հաստատում.

ա) փորձագետի թեկնածությունն առաջարկվում է ՄԿԾ-ն իրականացնող ամբիոնի կողմից, քննարկվում համապատասխան ֆակուլտետի խորհրդում և հաստատվում ԳՊՀ գիտական խորհրդի կողմից՝ բաց քվեարկությամբ:

10.Փորձաքննության եզրափակիչ փուլ.

10.1. փորձագիտական եզրակացությունը քննարկվում է ՄԿԾ-ն իրականացնող ամբիոնում, համապատասխան ֆակուլտետի խորհրդում և առարկություններ չունենալու դեպքում ստորագրվում ԳՊՀ լիազորված անձի կողմից,

10.2.ԳՊՀ-ն ապահովում է փորձագետի աշխատանքի վարձատրություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձագետի հետ կնքած պայմանագրով նախատեսված չափով և ժամկետում,

10.3.փորձագիտական եզրակացությունը քննարկվում է ԳՊՀ գիտական խորհրդի նիստում՝ անհամապատասխանությունների վերացման, թերությունների շտկման, բացերի լրացման և բարելավման միջոցառումների իրականացման նպատակով: